3993

17

2010

2001

ԾՐԱԳԻՐ

Հ. Հ. ԴԻՎԻԶԻՍՅԻ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՂԼՈՒՍ-ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ 1922 Թ. ԱՊՐԻԼ ԱՄՍՎԱ

Ապրիլ ամսվա ընթացքում անհրաժեշտ է տանել նախապատրաստական աշխատանքներ լագերային կյանքի համար, վորպեսզի լագերային ժամանակաշրջանում աշխատանքներն ընթանան վորոշված պլանով, հարմարեցված լագերային կյանքին։ Անհրաժեշտ է, վոր զորամասերը ձեռք առնեն ամեն մի միջոց հայթհայթելու պետք յեղած ակումբային և զվարճալի առարկաներ, վորպեսզի լագերում այդպիսի առարկաների մեծ կարիք չզգացվի (զվարճալի գրասեղաններ, դրատախտակներ, քարտեզներ, ակումբի նստարաններ, սեղաններ, ֆուտբոլի գնդակներ, բեմի հարմարություններ և այլն)։

Քաղաքաժինը արդեն վորոշ գումար տրամադրել է զորամասերին այդ առարկաները ձեռք բերելու համար. անհրաժեշտ է, վոր զորամասերը երբեք հոգ տանեն պակասը լրացնելու համար առանձնապես շեֆերի հատկացրած գումարներից։

Պետք է նորից հիշել, որ ապրիլ ամիսը ոչ մի անգրագետ զինվոր չպետք է թողնի մեր դիվիզիայում։

Այս ամսում Քաղբաժինը հարվածային աշխատանք է համարելու հրամկազմի հետ տարվելիք աշխատանքների և գնդի կրթողական կուրսերի կազմակերպման խնդիրները։

Պետք է այդ աշխատանքները կազմակերպել այնպես, ինչպես քաղաքամերի աշխատանքները արդեն կազմակերպված են։

Այդ պատճառով էլ անհրաժեշտ է, որպեսզի առանձին ուշադրություն դարձվի գրագրանային աշխատանքների վրա։ Գրագրանները պետք է հայթհայթեն այն ոժանդակիչ ձեռնարկները, որոնք պետք է կարգացվեն հրամ և քաղկազմի ու կարմիր բանակայինների կողմից, իրենց քաղաքական անգրագիտությունը վերացնելու համար։ Պետք է վերջ տալ գրագրանային քաոսին և ոգտագործել գրքերը նպատակահարմար կերպով։ Պետք է ստեղծել գրագրանների համար տեխնիկական հարմարություններ (շկաֆներ և այլն) և ամենախիստ հսկողություն ունենալ, որ գրքերը չփչանան և առանձին անհատների սեփականություն չդառնան։ Այս աշխատանքի վերջնական կանոնավորման սկիզբը պետք է դնել ապրիլ ամսից։

Հարվածային կամպանիաների քչությունը

29545-Ա. Հ.

ապրիլ ամսում հնարավորություն պետք է տա զորամասերին սիստեմատիկ աշխատանքների վերջնական կանոնավորման վրա հատուկ ուշադրություն դարձնելու։

ԿԱԶՄ-ՀԱՇՎԵՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

ԿԱԶՄ—ՀՐԱՀԱՆԳՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Ապրիլի 12-ին հրավիրվում է պատասխանատու կազմակերպիչների և կոմբջիջների քարտուղարների խորհրդակցություն։ Պատրաստվել տեղերի զեկուցումներով հանդես գալու համար։

2. Վերջացնել Քաղ-բաժնի հունվարին կատարած ինսպեկցիայի թերությունները և մինչև մայիս 1-ը ներկայացնել լրիվ զեկուցում այդ առթիվ։

3. Պատրաստվել լագեր դուրս գալու համար։

4. Դիվիզիայի կուսակցական II-րդ կոնֆերենցիայի, Անդրկովկասյան Զորային կոնֆերենցիայի և Քաղ-բաժնի պետերի խորհրդակցության վորոշումները կազմ-հրահանգչական աշխատանքների սահմաններում կատար ածել։

5. Քաղաքացիական կազմակերպությունների հետ կապվել ապրիլին հաշմանդամների ոգնության շաբաթը անցկացնելու համար։ Կը-

12600-SS

որվեն համապատասխան ցուցմունքներ։

6. Պատրաստվել Քաղ-բաժնի անմիջական ցուցմունքներով մայիսի 1-ի տոնը հանդիսավոր կատարելու համար։

ԿՈՒՍ. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Կանոնավորել կոլեկտիվների և կոմբինատների կուսակցական աշխատանքների հաշվառումը համաձայն Քաղբաժնի № № 34, 38 շրջաբերականների։

2. Լրիվ կազմած կոմբինատների պատմությունների պատճենները ներկայացնել Քաղ-բաժին։ Կիսատ մնացածների կազմումը շարունակել և վերջացնել մինչև ապրիլ ամսի վերջը։

3. Դիվ. կուսակցական II-րդ կոնֆերենցիայի թեզիսները կուսակցական շինարարության առթիվ դարձնել առաջիկա ամիսներում կոլեկտիվների աշխատանքների ուղղեցույցը։ Այդ թեզիսների կիրառման համար Քաղ-բաժնի համապատասխան շրջաբերականները անմիջականորեն կատար ածել։

4. Պատրաստվել պատասխանատու կազմակերպիչների և կոմբինատների քարտուղարների ապրիլի 12-ի խորհրդակցության։

5. Կուսակցական ապարատները նախապատրաստել լաղեր դուրս գալու համար։

6. Կուսակցական պարտականությունների թերթիկների կիրառումը վերջնականորեն կանոնավորել և հետևել նրանց ճիշտ լրացման համար։

7. Կոլեկտիվներում Քաղ-բաժնից ստացված կուսակցական գործերը բաժանել բջիջների մեջ ըստ պատկանելության։ Այնպես, որ ապրիլի վերջերին կուսակցության բոլոր անդամները և թեկնածուները կոմբջիջում ունենան իրենց գործերը։

8. Ցերևանի կոլեկտիվում կոմբջիջների տարած աշխատանքների առթիվ կազմած ակտերի բացերը ապրիլ ամսվա ընթացքում ուղղել։

Կոմբջիջների ապրիլ ամսվա հերթական նիստերի օրինակելի որակարգ.—

I

Ապրիլի 8-ին (կիրակի)

ա) Ընթացիկ մոմենտը.

բ) Կուսակցական շինարարությունը Կարմիր Բանակում (հիմք ունենալով դիվ. կուս. II-րդ կոնֆերանսի վորոշումները).

գ) Տեղական և կուսակցական հարցեր։

II.

Ապրիլի 22-ին (կիրակի)

ա. Ա.Ռ. Կով. Բանակի և Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունների կոնֆերանսների վորոշումները։

բ. Պատ. կազմակերպիչների զեկուցումներն իրենց աշխատանքների մասին։

գ. Բշիշի քարտուղարի զեկուցումը, № 34 շրջաբերականի համաձայն։

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ՅԵՎ ՍՏԱՏԻՍՏԻԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1) Շտապ հաղորդագրություններն ուղարկել Քաղ-բաժին՝ տարված կամպանիայի յերկրորդ որը։ Ծրագրի վրան գրել «շտապ»։

2) Հաղորդագրություններում տալ ամփոփ տեղեկություններ տարված աշխատանքների թեմաների, թեզիսների և թվական տվյալների մասին։

3) Սույն ամսին շտապ հաղորդագրությունների նյութ պիտի լինեն.

1. Դաշնակների ավանտյուրայի լիկվիդացիան. 2. Լենայի անցքերը. 3. Կարլ Մարքսի ծննդյան 105 ամյակը և «Կոմունիստական մանիֆեստի» 75 ամյակը։ 4. Կոմսոմոլի զատիկը։ 5. Ինվալիդների ոգնության շաբաթը։ 6. Կարմիր ոդային նավատորմիղի կամպանիան։ 7. Մամուլի ոգտին հավաքած նվերները։ 8) Մայիսի 1-ի տոնակատարության պատրաստությունները։ 9. Լագեր դուրս գալու պատրաստությունները։ 10. Կոմբջիջների աշխատանքները։ 11. Գնդերի կրկնողական կուրսերը։ 12. Պարապմունքները հրամկազմի հետ։ 13. Քաղդեկների, դպրոցական աշխատանքների մեթոդական խորհրդակցությունները։ 14. Հակակրոնական պրոպագանդան։ 15. Կուսխմբակների պարապմունքները։ 16. Սան.ժամ. 17. Կարմիր անկյունների աշխատանքները։ 18. Զին-թղթակիցների աշխատանքները։

4) Լրիվ զեկույցներ ներկայացնել (կետառկետ) Քաղբաժնի ինսպեկցիայի շեշտած թեմաների մասին։

5) Վերջնականապես կանոնավորել որագրաթերթերի (журнал, дневник) կազմումը։

6) Կանոնավորել պատկազմակերպիչների, զավկլուբների, գրադարանապետների և դպրոցական աշխատողների ամսական հաշվետվությունները։ Պատկազմակերպիչների, զավկուբների զեկույցները կցել զինկոմների ամսական զեկույցներին։

7) Մեծ ուշադրություն դարձնել ստատիստիքական հաշվետվությունների վրա (дневник)։

ՀԱՇՎԵԱՌՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Շարունակել մարտ ամսվա ծրագիրը։

2) Վոչ ուշ քան ամսույս 10-ը ներկայացնել մարտ ամսվա ծրագրի 1-ին, 2-րդ և 7-րդ կետերում հիշված ատեստացիաները, քաղ-աշխատողների ծառայության գործերը և կուսակցական ընկերների ատաժներին վերաբերվող տեղեկագրերը։

3) Զորային Զինվորա-քաղաքական դպրոցի

համար կազմել թեկնածուների ցուցակ։

ԱԳԻՏ-ՊՐՈՊԱԳԱՆԴԻՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1. Անցնել գնդերում ստուգողական դասընթացների (поверочные курсы) պարապմունքներին։

2. Անցկացնել ուղարկված քաղ-պարապմունքների նոր ծրագիրը հրամկազմի հետ։

3. Քաղղեկների մեթոդական խորհրդակցություններով ուժեղացնել ղեկավարությունը։

4. Վերջնականապես կենտրոնացնել ագիտ-պրոպագանդիստական բոլոր աշխատանքները քաղժամի շուրջը։

5. Պատրաստվել անցկացնելու հակակրոնական պրոպագանդա։

6. Սկսել կարմիր ոդային ֆլոտի կամպանիան, տալով տևական բնույթ։

7. Պատրաստվել անցկացնելու Մայիսի 1-ի տոնակատարությունը, կարգ Մարքսի ծննդյան տարեդարձը, «Կոմունիստական մանիֆեստի» լույս ընծայելու 75 ամյակը։

8. Ուժեղացնել տեղական կուս. կազմակերպությունների հետ ունեցած կապը, աշխատելով ոգտվել նրանց ուժերից։

9. Կանոնավորել քաղխմբակների աշխատանքը, ղեկավարվելով Пуока-ի շրջաբերականով (բյուլետեն № 3 և շրջաբերական № 18)։

10. Սկսել ուժեղ կամպանիա գրքերի սեփականացման դեմ և կանոնավորել վերջնականապես զրադարանային աշխատանքները։

ՔԱՂԺԱՄ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. Հողային հարցը մինչ հեղափոխությունը։

2. Որենքների կոդեքսը հողի աշխատավորական ոգտագործման մասին։ Կարևոր կետերը ա) ընդհանուր մասը բ) հողի աշխատավորական ոգտագործման իրավունքի մասին գ) հողի աշխատավորական արենդի մասին դ) հողային միությունների մասին ե) հողի ոգտագործման կարգի մասին զ) հողային սահմանի մասին է) հողի առանձնացման մասին ը) հողի աշխատավորական ոգտագործման և շինարարության ամրացման մասին.

3. Միջոցներ բարձրացնելու գյուղատնտեսության արտադրողականությունը և հերթական սերմանման կամպանիա։

ՔԱՂԺԱՄԻ ԱՅԼ ՆՅՈՒԹԵՐ

1. Հայաստանի 2-րդ խորհրդայնացումը, գաշնակցական ավանդույթների լիկվիդացիան և Ցերևանի վերադրավումը (ապրիլի 2-ին)։

2. Լենինի դեպքերը.

3. Լուսաբանումը քաղաքական ընթացիկ դեպքերի

4. Մայիսի 1-ը

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՅԻՆՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՆԵՐԻՆ

1. Մայիսի 1-ի մասին։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1. Սկսել ընթացավարտների արձակումը՝ ապրիլ 15-ից (выпуск) պատրաստված խմբակների, իսկ 25-ից մնացածների։

2. Ունենալ դպրոցական խորհուրդների 2 նիստ։

3. Անցնել մատեմատիկայի լրացուցիչ ծրագիրը, շրջաբերական Քաղաժնի № 1000։

4. Ուժեղացնել դպրոցի, ակումբի և գրադարանի կապը։

ԱԿՈՒՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

——

ԽՄԲԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1) Քաղխմբակներում քննել և խորացնել Խորհրդային իշխանության քաղաքականությունը կրոնական և գյուղատնտեսական խնդիրներում։

2) Գրական, դրամատիկական և կերտողական արվեստի խմբակներին պատրաստվել հակակրոնական ագիտացիան անցկացնելու համար։

3) Բոլոր խմբակներին պատրաստվել շքեղ և հանդիսավոր կերպով տոնելու Մայիսի մեկը։

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1) Բոլոր ակումբներում անմիջական ոգնություն և մասնակցություն ցույց տալ քաղաժամը ստուգելիս քաղլատարիներ կազմակերպելով։ Այս աշխատանքը կիրառել բացառապես ակումբային մեթոդներով (այս մասին կը լինի առանձին հրահանգ)։

2) Ֆիզիկական զարգացման ասպարիզում պատրաստել մասսայական սպորտ-խաղեր Մայիսի մեկի տոնին։

3) Ոգտագործել քրիստոնեական զատիկը մասսայական հակակրոնական պրոպագանդայի համար։

4) Պարզաբանել ակումբներում որացուցային տոները և հոբելյանական որերը (Բագվի խորհրդայնացումը, Լենայի կոտորածները, Լենինի ծննդյան տարեդարձը, «Կոմունիստական Մանիֆեստ»-ի հրատարակման 75-ամյակը) և ներկա մոմենտը։

5) Տանել լայն կամպանիա «ինչ-որ ողբաբ վերաբերմունք դեպի հրացանը»։

ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1) Կենդանացնել աշխատանքը Կարմիր անկյուններում։

2) Պատրաստվել հարմարեցնելու ակումբային աշխատանքները լաղերային պայմանների հետ։

3) Կազմակերպել ակումբային և գրադա-

բանային աշխատանքների մեթոդիքական խորհրդակցություն՝ կարմիր բանակային քաղաքական և ռազմական կրթության հարցի շուրջը։

4) Կազմակերպել խմբագրական կոլեգիաներ և հրատարակել բանավոր ու պատի թերթեր։

5) Ուժեղ տեմպով շարունակել ինքնաստեղծագործական անկյունների աշխատանքների խորացումը։

6) Կազմակերպել եկսկուրսիաներ։

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

1) Վերջացնել գրադարաններում տեխնիքական ամբողջ աշխատանքները (ինվենտարների, գրացուցակների, ֆորմուլյատների կազմելը, գրքերի դուրս տալու կանոնավորումն և այլն)։

2) Պատրաստվել ամառվա լաստերային հավաքույթին. այսինքն այն մասերի համար, որոնք ցրվելու կամ հեռանալու յեն գնդերից, սկսել կազմակերպել հատուկ գրադարաններ։

3) Կազմել հանձնարարական ցուցակներ ակումբի և կուսխմբակների աշխատանքների ընթացքի համար։

4) Ակտիվ կերպով մասնակցել և անցկացնել զորամասերում տարվող կամպանիաները (քաղժամերը, մայիսի մեկը, հակակրոնական ագիտացիան, խնայողաբար վերաբերմունք դեպի հրացան, որացույցային տոները և այլն)։ Այս

կամպանիաների և քաղժամերի համար կազմել հանձնարարական ցուցակներ, գրքերի ցուցահանդեսներ, բացել ընթերցանությունը և այլն։

5) Գրադարանապետներին ուշադրություն դարձնել իրենց ինքնազարգացման վրա, վորի համար կարդալ Գորբաժնի մատնանշված գրքերի 3-րդ և 5-րդ բաժիններից (ցուցակը կուղարկվի հետագայում)։

ԹՂԹԱԿՑԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1) Զինկոմները և կուսակցական կազմակերպությունները պետք է հետևեն, վորպեսզի համաձայն բանակի մաշտարով տրված 1922 թ. № 1891 հրամանի՝ զորամասերը շնֆական բոլոր յեկամուտների 10 տոկոսը հատկացնեն «Կարմիր Զինվորին»։

2) «Կարմիր Զինվորի» և «Կարմիր Մարտիկի» նշանակությունն ու արժեքը բարձրացնելով և այլ միջոցներով թղթակցական և առհասարակ լուրջ աշխատակցության համար առաջ քաշել թե կարմիր բանակայինների լայն մասսաները և թե կրտսեր ու բարձր հրամկազմը,

3) Զինթղթակիցները պետք է կազմակերպեն բանավոր-կենդանի և պատի լրագրներ կ. բանակայինների լայն մասնակցությամբ։ Հրահանգները ուղարկվում են անմիջապես։

4) Դպրոցներ ունեցող զորամասերի զինթղթակիցները մասնակցելու յեն լավ ուսուցչի համար հայտարարված մրցությանը (конкурс)։

5) Վերջնականապես բոլոր գնդերում և նրանց համահավասար զորամասերում ունենալ վորոշ պատասխանատու զինթղթակիցներ, վորոնց մասին ամենակարճ ժամանակամիջոցում հայտնել «Կ. Զ» խմբագրությանը։ Զինթղթակիցներ ունենալ նաև ակումբներում, քաղուսկոմներում, գումարտակներում, և այն վաշտերում, վորոնք զորամասերից հեռու յեն գտնվում։

6) Զինթղթակցական գործը զորամասերում կանոնավորելով, զինթղթակիցները պատրաստվելու յեն դիվիզիայի խորհրդակցության, վորտեղ նրանք հաշվետվություն են ներկայացնելու իրենց զորամասի թղթակցական աշխատանքների մասին։

Խորհրդակցության ժամանակը և որակարգը կհայտնվի առանձնապես։

ՍԱՆԼՈՒՍ ԱՇԽԱՏԱՆՔ

I. ՍԱՆԺԱՄ

1-ին ժամ, 5-րդ կետ. Պատվաստումն յեվ նրա նշանակությունը։

6-րդ կետ. Պատվաստումն ծաղկի դեմ։ Дивакция Лечебные сиворотки.

2-րդ ժամ, 6-րդ կետ. Ախտահանություն յեվ дезинсекция.

Բաղնիս, ախտահանական սենյակ (дезкамера)։ Пропускная система. Առանձնացումն (изоляция)։ Առանձնակայանի նշանակությունը զորամասում։

3-րդ ժամ, 7-րդ և 8-րդ կետերը. Կեղտոտության հիվանդությունները յեվ կ. բանակային անձնական առողջապահությունը։

Մակաբուծական տիֆեր (паразитарные тифы)։ Վոշտությունը վորպես ցաքական ռեժիմի ժառանգություն։

Բոր (քոս, чесотка)։ Մարմնի առողջապահությունը։ Մարմնի քննությունն։ Հագուստի առողջապահություն (սպիտակեղենը, փաթաթանները, վոտնամանները և այլն)։

4-րդ ժամ, 9-րդ և 10-րդ կետեր. Անտեսանելի թշնամիներն ու բարեկամները և վարակիչ հիվանդությունների տարածման պայմանները։

Հիվանդություն առաջացնող միկրոբները։

Միկրոբների դերը բնության, գյուղատնտեսության և տեխնիկայի մեջ։ Վարակման ուղիները։ Սոցիալական պայմանները։ Կապիտալի շահագործումը։ Կռիվը վարակիչ հիվանդությունների դեմ կապիտալիստական և սոցիալիստական պետություններում։

Ծանոթություն.—Յանժամը սույն ծրագրում ցույց է տրված համաձայն թաղային ծրագրի, վորը կցված եր զինվորական սանիտարական վարչության (военсанвед) 1923 թվի հունվարի 24 № 19 հրամանի § 2-ին։ Այստեղ ցույց տրված նյութը պետք է սպառվի ապրիլ ամսվա 4 սանժամերի ընթացքում։ Նյութի կարգը փոփոխված է շնորհիվ այն բանի, վոր ապրիլում

արդեն անցկացվելու յենչ «պատվաստման» և «մաքրության շաբաթը» կամպանիաները։ Թաղային ծրագիրը վերջացնելուց հետո պետք է ըստ կարելույն սուուգել կարմիր բանակայինների գիտելիքները, համաձայն Հ.Ռ.Հ.Խ. № 1242 (1921 թվից) հրամանի։ Սուուցման հետևանքները մացնել կ. բանակայինների գրքույկներում։

II. ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՄԱՌԱՆՈՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Զորամասը ամառանոց դուրս գալու առթիվ բոլոր մասերում ստանել կամպանիա ամառանոցների սուողջապահական բարելավման հարցերի շուրջը։ Անհրաժեշտ է կազմակերպել մասսայական դաստիարակություններ թե կարմիր բանակայինների և թե քաղ ու հրամկազմի համար (կայազորի մասշտաբով) բարելավ ամառանոցի «Սանիտարական-սուողջապահական պայմանները» թեմայի շուրջը։ (Համապատասխան աշակցող նյութ և հոդվածներ կլինեն «Կարմիր Մարտիկ»-ում և «Կարմիր Զինվոր»-ում։

Քաղբաժնի պետ Ժ. Գ. յեվ Ազիտ-պրոպ մասի պետ՝ Վ. ԾՈՎՑԱՆ

Դազմ-հաշվեառ մասի պետ Ժ. Գ. Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ազիտ-պրոպ մասի քարտուղար՝

ՀՐԱՄԱՆ

№ 129

Հայկական հեղափոխական դիվիզիայի

Յերևան քաղ., 1923 թ. մարտի «22»

§ 1

Առանձին Կովկասյան Զորաբանակի հրամանը սույն թվի մարտի 7-ից № 182, կրտսեր և միջակ հրամկազմի հետ տարվելիք պարտադիր քաղաքական պարապմունքների մասին հաստատվում է ի գործադրություն։

§ 2

Վորի կատարման համար հրամայում եմ.

1. Դիվիզիայի մաշտաբով տրված հրամանը փետրվարի 8-ից № 60 վերացնել։

2. Բոլոր մասերում և հիմնարկություններում կազմակերպել պարտադիր քաղ-պարապմունքներ ինչպես կրտսեր հրամկազմի համար, այնպես էլ միջակ հրամկազմի այն անձանց համար, վորոնք այդ մասին ցանկություն կը հայտնեն։ Պարապմունքները լինելու յեն համաձայն Հ. Ռ. Հ. Խ. № 214 հրամանին կցված ծրագրի, միջակ հրամկազմին հնարավորություն տալով ծրագիրը ինքնարար կարդալու միջոցով յուրացնելու։

Քաղ-բաժինը տալու յե հրահանգ՝ քաղ-պարապմունքներ կազմակերպելու և մացնելու ինչպես կոլեկտիվային, այնպես էլ անհատական, մատակարարելու համապատասխան գրականություն և վորոշելու յե այն անձաց կազմը, վորոնց վրա պարտակիանությունը դրվում պա-

19600-58

բապմունքներ վարելը։ Նա յել պետք է պարբերաբար ստուգի հրամանի գործադրումը, պարապմունքների ընթացքն ու դասախոսների կազմը, և Հ. Ռ. Հ. Խ № 214 հրամանի մեջ ցուցած ժամկետներին հրամկազմի գիտելիքների ստուգումն կատարի։

Դիվիզիայի հրամանատարի Ժ. Պ.
ԱՐԱՐԱՏՅԱՆ

Դիվիզիայի զինկոմի Ժ. Պ.
Վ. ԾՈՎՅԱՆ

Դիվիզիայի շտաբի պետի Ժ. Պ.
ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

ԾՐԱՔԲԵՐԱԿԱՆ № 40|Ц

Հ. ՀՐԱՅԱՆԱՔԻԳ ԴԻՎԻԶԻՅԻ ՔԱՂԲԱԺՆԻ ԲՈԼՈՐ ԶԻՆԿՈՄՆԵՐԻՆ

Գլխավոր հրամանատարի ս. թ. №214 հրամանի համաձայն Կարմիր Բանակի հրամկազմը պետք է ունենա քաղաքական պատրաստականության այն մինիմումը, որը ամփոփված է սրան կից ծրագրի մեջ։

Այդ նպատակին հասնելու համար առաջարկված է բոլոր Քաղաքական վարչություններին և Քաղաքական բաժիններին՝ կազմակերպելու սիստեմատիկ և պարտադիր պարապմունքներ կրասեր հրամկազմի հետ (տես հրահանգ)։

Միջակ հրամկազմին նույնպես հնարավորություն է տրվում մասնակցելու այդ պարապմունքներին, յեթե նրանք հարմար կտեսնեն այդ ձևով լիկվիդացիայի յենթարկել իրենց քաղաքական անգրագիտությունը։ Մնացած հրամկազմը (բարձրը ամբողջությամբ և միջակից նրանք՝ որոնք չեն մասնակցում սիստեմատիկ պարապմունքներին) պարտավոր է ձեռք բերել քաղաքական գրագիտության այդ մինիմումը՝ ընթերցման միջոցով։

Քաղբաժինը առաջարկում է Հայկական Դիվիզիայի բոլոր զինկոմներին այդ աշխատանքների համար ձեռք առնել հետևյալ միջոցները.

1. Անմիջապես ձեռնարկել կազմակերպելու և սկսելու սիստեմատիկ պարապմունքները կրտսեր հրամկազմի հետ (համաձայն սրան կցված հրահանգի)։

2. Հավաքել ընդհանուր ժողովներ զորամասի կամ հիմնարկության բոլոր հրամկազմի և անպայման կարդալ գլխավոր հրամանատարի սույն թվի հունվարի 30-ի № 214 և Ա. Կ. Բ.-ի սույն թվի մարտի 7-ի № 182 հրամանագիրը։

3. Հայթհայթել պետք յեղած գրականությունը ընթերցանության համար։ Ոգտագործել զորամասի գրադարանների գրքերը և պարապմունքների ծրագրում հիշատակված ժամանակակից ձեռնարկների բացակայության դ'պքում ցուցակը ներկայացնել Քաղբաժին՝ պակասած գրքերը ստանալու համար։

4. Կազմակերպել հրամկազմի հատուկ

ընդհանուր ժողովներ, քննության նյութ դարձնելով քաղաքականապես գրագետ հրամանատարի նշանակությունը Կարմիր Բանակում։

Զեռք առած բոլոր միջոցների և աշխատանքների ընթացքի մասին պարբերաբար հիշատակել ամսական զեկուցումների և շտապ տեղեկությունների մեջ։

Քաղբաժնի պետի տեղակալ յեվ
Ագիտ-պրոպ մասի պետ՝ Վ. ԾՈՎԻԱՆ

ՀՐԱՀԱՆԳ

ԿԱՐՄԻՐ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՀԵՏ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գլխավոր հրամանատարի ս. թ. հունվարի 30-ին հրատարակված հրաման № 214-ը հաստատուն հիմք է դնում հրամկազմի հետ տարվող քաղաշխատանքներին և այդպիսով վերջ է տալիս մինչև այժմ այդ ասպարիզում տարվող աշխատանքների անայնագործական մեթոդներին։

Կրտսեր Հրամկազմի հետ քաղպարապմունքները կազմակերպելու համար անհրաժեշտ է.

1. Ցուցակագրել 5-րդ կարգից (разряд) մինչև 9-րդ կարգը ներառյալ հրամ., ադմինիստրատիվ-տնտեսական կազմի և բժշկա-սանիտարական պերսոնալին՝ պարտադիր պարապմունքներ սկսելու համար։

ԾԱՆՈԹ.—9-րդ կարգից բարձր հրամկազմի ցուցակագրությունը կամավոր է։

2. Կազմել խմբակներ բոլոր զորամասերին և զինվորական հիմնարկություններին կից։ Յուրաքանչյուր խմբակ պետք է բաղկացած լինի 30 հոգուց վոչ ավել և 15 հոգուց վոչ պակաս։

ԾԱՆՈԹ.—Այն զորամասեր և հիմնարկությունները, վորոնք 15 հոգուց պակաս կրտսեր հրամկազմ ունին՝ միանում են մոտակա զորամասի կամ հիմնարկության խմբակներին, Քաղբաժնի համաձայնությամբ և գիտությամբ։

3. Նախապատրաստական բոլոր աշխատանքները վերջացնել մինչև ապրիլի 1-ը, կազմել ժամերի դասավորումը և որեր նշանակել այն հաշվով, վոր ամսական լինի վեց պարապմունք և յուրաքանչյուր պարապմունքը՝ 2 ժամ։ Ապրիլի 2-ից սկսել կանոնավոր պարապմունքներ։

4. Պարապմունքներին տալ պարտադիր և սիստեմատիկ բնույթ։ Ունենալ առանձին անվանացուցակ և ամեն անգամ նշանակել ներկաների և բացակաների ազգանունները։ Բացակայողներին պատժել, վորպես ռազմական հրաման չկատարողների։

5. Պարապմունքները տանել այնպես, վորպեսզի լսողները ակտիվ մասնակցություն ցույց տան և հետզհետե յերևան գա նրանց ինքնագործունեությունը քաղաքական խնդիրների ասպարիզում (զեկուցումներ հրամկազմի անդամներից, ռեֆերատներ, զրույցներ և այլն)։

6. Պարապմունքները պետք է տանեն Դիվիզիոնի մասշտաբով աշխատողները։

ԾԱՆՈԹ.—Այն վայրերում, վորտեղ չկան այդպիսի աշխատողներ, պարապմունքները հանձնել ամենաշատ պատրաստականություն ունեցող աշխատողների։

7. Պետք է մտնել տեղական կուսակցական կոմիտեների հետ հարաբերության մեջ, պարապմունքների գործը հանձնելու քաղաքացիական հիմնարկություններում աշխատող պատրաստված ընկերների (այնտեղ՝ վորտեղ այդ հնարավոր է)։

8. Նկատի ունենալով գրականության քչությունը, անհրաժեշտ է կազմակերպել պարապմունքներից դուրս՝ գրքերի խմբակային ընթերցանություն։

9. Ծրագիրը պարունակում է իր մեջ հրամկազմի մի շարք գործնական պարապմունքները քաղուսավարչական ասպարիզում։ Այդ ասպարիզում քաղուսաշխատանքների բոլոր որգանները (ակումբը առանձնապես) պետք է ամեն կերպ ոժանդակեն այդ պարապմունքներին, աշխատելով միաժամանակ, վորպեսզի քաղուսաշխատանքի ընդհանուր ընթացքը չխանգարվի։

Նախապես ձեռք առած միջոցների, ինչպես նաև աշխատանքների ընթացքի մասին հայտնել շտապ տեղեկությունների միջոցով, շեշտելով պակասությունների և դժվարությունների վրա։

Քաղբաժնի պետի տեղակալ և
Ագիտ-պրոպ մասի պետ՝ Վ. Ծովյան

ԿՐՏՍԵՐ ՀՐԱՄԿԱԶՄԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ

ԾՐԱԳԻՐ

(6 ամսվա համար, ամսեկան 6 պարապմունք, ընդհամենը 36 պարապմունք)

1. ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ, ՆՐԱ ԿԱԶՄԸ, ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ՅԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

1-ին պարապմունք.—Խորհրդային հանրապետությունների միջազգային դրությունը և մշտական կարմիր բանակի անհրաժեշտությունը։ Հրամկազմի նշանակությունը նրա մեջ։

2-րդ պարապմունք.—Կարմիր Բանակի կազմակերպման հիմնական սկզբունքները, նրա տարբերությունը բուրժուական պետությունների բանակից։ Հրամկազմի տեղը ու դերը։

3-րդ պարապմունք.— Կարմիր Բանակի քաղաքական ապարատը և նրա նշանակությունը։ Հրամկազմ և քաղաշխատանքը։

ՈԺԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Քաղաքական դրագիտության ծրագիրը համաձայն Հ. Ք. Վ. (Пур) № 497 հրամանի ա. գլուխը §§ 1—6 և §§ 35 —48։

Смилга—Строительство Красной Армии

Быстрицкий—Армия империализма и армия революции.

Троцкий—Организация Красной Армии (Доклад на 5-м с'езде Советов).

„ Красная Армия (հոդված „Политработник“ ամսագրի № № 6—7)

„ Фронтов нет—опасность есть (Զեկուցում խորհուրդների 9-րդ համագումարում):

4—5-րդ պարապմունքներ.—Հրահանգչական պարապմունք. ինչպես սովորեցնել կարմիր բանակայիններին քաղաքական ուսմունքը (полит устав):—Գործնական պարապմունք. զրույց կարմիր բանակայինների հետ քաղուստավի 8-րդ գլխից (կարմիր յերդման մասին):

II. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆԵՐԱ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6-րդ պարապմունք.—Խորհրդային հանրապետության տարբերությունը կապիտալիստական պետություններից (բուրժուական դեմոկրատիան և պրոլետարիատի դիկտատուրան):

—Սոցիալիստական խորհրդային հանրապետությունների միությունը:

7—8-րդ պարապմունքներ.—Խորհրդային ապարատի կառուցվածքը:

ՈՐԴԱՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Քաղդրագիտության ծրագիր Հ. Ք. Վ. (Пур) № 497 հրամանի գլ. 2-րդ §§ 7—26:

Кин. — Советская власть и ее устройство (կթարգմանվի նույնպես հայերեն լեզվով)

Բուխարին և Պրեոբրաժենսկի.—Կոմունիզմի այբուբենը գլ. IV և VII:

Стучка — Конституция Р.С.Ф.С.Р. в вопросах и ответах—Սահմանադրության բնագիրը:

— Հայաստանի սոց. խորհրդ. հանրապետության խորհուրդների ա. համագումարի արձանագրությունները (վորի մեջ տեղավորված է նույնպես Հ. Ս. Խ. Հ. Սահմանադրությունը):

„ Постановление X С'езда Советов об образовании С. С. С. Р. и постановления 1 С'езда С. С. С. Р.

9—10-րդ պարապմունքներ.—Հրահանգչական պարապմունք. ինչպես տանել բանավոր և կենդանի լրագիրը:—Գործնական պարապմունք. զրույց քաղուստավի 2-րդ գլխից. նախընտրական բանավոր կամ կենդանի լրագիր:

III ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ (ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄՎԵՑ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ)

11-րդ պարապմունք.—1917 թվի Հոկտեմբերյան հեղափոխությունը և բանվորների ու գյուղացիների հաղթանակը կապիտալիստների և կալվածատերերի վրա: Դասակարգեր և դասակարգային պայքարը Ռուսաստանում: Գործարանային արդյունաբերության զարգացումը, բանվորների թվի մեծացումը, զարգացումը և

անբավականությունը։ Գյուղացիության ազատագրումը ճորտատիրական կապանքներից և նրա սակավահողությունը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը և Անդրկովկասյան հակահեղափոխությունը։ Ազգային անկախ հանրապետությունների կազմությունը։ Ազգամիջյան կռիվները և կոտորածները։ Անդրկովկասը իմպերիալիստական պետությունների գաղութը և դավադրությունների վայրը։ Հոկտեմբերյան հեղափոխության արձագանգները Անդրկովկասում։ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը 1920 և 1921 թվականներին։

12-րդ պարապմունք.—1905 թվի հեղափոխությունը. Բայշևիկյան կուսակցության դերը հեղափոխության մեջ։ Հեղափոխության հետևանքները. բանվորների և գյուղացիների ջլատումը.—դրա պատճառները։—1905 թվի հեղափոխության արձագանգները Անդրկովկասում։ Ցարական կառավարության քաղաքականությունը Կովկասյան ազգությունների նկատմամբ։ Հայ-Թուրքական ընդհարումները և ազգայնական կուսակցությունները։ Անդրկովկասյան բայշևիկները և ազգամիջյան ընդհարումները։

13-րդ պարապմունք.—1914 թվի իմպերիալիստական պատերազմը. միապետության սրնանկությունը և անկումը։ 1917 թվի փետրվարյան հեղափոխությունը և իշխանությունը կապիտալիստների ձեռքում։ Մենշևիկների և եսերների դավաճանական դերը։

— 1914 թվի պատերազմը և հայ ազգայնականները։ Կամավորական շարժումները և նրանց հետևանքները։ Տաճկահայ հարցը և ցարական պետության քաղաքականությունը։ Դաշնակցականները վորպես ցարի ագենտները։

14-րդ պարապմունք.—Բանվորների և գյուղացիների միությունը Կերենսկու ժամանակավոր կառավարության դեմ մղված պայքարում. Բայշևիկների կուսակցութ. ղեկավարող դերը։ Հոկտեմբերյան հեղափոխությունը. քաղաքացիական կռիվները և Ռուսական կապիտալիստների ու կալվածատերերի պաշտպանությունը համաշխարհային բուրժուազիայի կողմից։

— Հայաստանի բանվորների և գյուղացիների դժգոհությունը դաշնակցական մաուզերիստական կառավարությունից։ 1920 թվի մայիսյան ցույցեր և ապստամբությունները Ցերևանում, Ալեքսանդրոպոլում, Նոր Բայազետում, Ղազախում և Հայաստանի մնացած բոլոր վայրերում։ Ապստամբության ճնշումը։ Նոյեմբերյան հեղափոխությունը։ Դաշնակցական 1921 թվի փետրվարյան հակահեղափոխությունը։ Պաշտպանություն իմպերիալիստական ուժերի կողմից։ Կարմիր Բանակի ոգնությունը Հայաստանի պրոլետարիատին և չքավոր գյուղացիությանը։

ՈՃԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Քաղաքագիտության ծրագիր Հ. Ք. Վ. (ПУР) հրաման № 497, գլ. 3 դ § § 27-34 Բուխարին և Պրեոբրաժենսկի—Կոմունիզմի

այբուբենի հառաջաբանի II մ. §§ 41-45

Фриче—История мирового рабочего движения, вып. III (Россия) гл. VII

Ս. Ատենյան—Ո՞ւր է յելքը.

Ա. Կարինյան—Քաղաքացիական կռիվները Հայաստանում

15-րդ Պարապմունք.-Հրահանգչական պարապմունք։ Ի՞նչպես կազմակերպել և անցկացնել հիշողության յերեկո։—Գործնական պարապմունք. հիշողության յերեկո Հոկտեմբերյան հեղաշրջման մասին. զրույց քաղուստավի 3-րդ գլխից։

IV Ս. Խ. Հ. Մ. ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՇՐՋԱՊԱՏՈՒՄ

16-րդ Պարապմունք.—Խորհրդային հանրապետությունների վոչնչացնելու ձգտումը համաշխարհային կապիտալի կողմից։ Խորհրդային հանրապետությունների պայքարը խաղաղության համար։

17, 18, 19-րդ Պարապմունքներ.—Մեր հարևանները։ Ռազմա-քաղաքական տեսություն։ Մերձ-Բալթյան պետությունները, Լեհաստանը, Ռումինիա, Տաճկաստանը, Պարսկաստանը, Սվեդնստանը, Չինաստանը, Ճապոնիա։ Այս զրույցների մեջ կանգ առնել ավյալ ժամանակում տիրող փոխ-հարաբերությունների և սահմանային խնդիրների վրա։

20-րդ Պարապմունք.— Հակահեղափոխական կուսակցությունները (միապետականներ,

կադետներ, եսերներ, մենշևիկներ, դաշնակներ և ամիկավարներ)։

ՈՐԺԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Քաղգրագիտության ծրագիրը, համաձայն Հ. Բ. Վ. (Пур) № 497 հրամանի §§ 49—54։

Раковский—Боярская Румыния

Марклевский—Польша и мировая революция

„ —Социальные отношения в Польше

Гран —Прибалтийские государства (Литвия, Эстония)

Шлихтер—Финляндия

Раковский—Красная Армия в борьбе с бандитизмом

[redacted]

Бардин—Политич. партии после Октября

21-22-րդ Պարապմունքներ.— Հրահանգչական պարապմունք։ Ինչպես դնել ինսցենիրովկան։ Գործնական պարապմունք. զինաթափման կոնֆերանսը։ Զրույց կարմիր բանակայիններին հետ քաղուստավի 5-րդ գլխից։

V Ռ. Կ. Կ. ՅԵՎ ԿՈՄԻՆՏԵՐՆԸ

23-րդ Պարապմունք.—Խորհրդային իշխանության պաշտպանությունը բոլոր յերկրների բանվորների կողմից։ Կոմունիստական 3-րդ Ինտերնացիոնալը—համաշխարհային պրոլետարական հեղափոխության շտաբը։ Պրոֆմիությունների Ինտերնացիոնալը։

24, 25 և 26-րդ Պարապմունքներ.—Բան-

վոր դասակարգի ղեկավարող դերը հեղափոխության մեջ։ Ռ. Կ. Կ. պրոլետարիատի ավանգարդ։ Ռ. Կ. Կ. ծրագրի և գործելակերպի եյությունը։ Բանվորների և գյուղացիների ապատագրական կռվում Ռ. Կ. Կ-ը վորպես ղեկավար (Ռուսաստանի հեղափոխական շարժման և Ռ. Կ. Կ. պատմության գլխավոր մոմենտներից պատմական ակնարկ)։

ՈԺԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Քաղգրագիտության ծրագիր համաձայն Հ. Ք. Վ. № 497 հրամանի, 6-րդ գլ., § § 58-63

Բուխարին և —Կոմունիզմի այբուբենը, գլ. V

Պրեոբրաժենսկի—Ленин и история партии

Вардин—История нашей партии

Батурин—Очерк истории социал-демократии в России

27-28-րդ Պարապմունքներ։—Հրահանգչական պարապմունք. ինչպես անցկացնել քաղաքական դաս։ Գործնական պարապմունք. քաղդաս Կոմինտերնի վրա։ Զրույց կարմիր բանակայինների հետ քաղուստավի 5-րդ գլխից։

VI ԽՈՐՀՐԴ. ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

29-րդ Պարապմունք. —Խորհրդային իշխանության հողային քաղաքականությունը։

30—31-րդ Պարապմունք.—Արդյունաբերության կազմակերպումը։ Աշխատանքի կազմակերպումը։ Յելեքտրոֆիկացիա, նրա նշանակությունը Խ. Հանրապետությունների անտեսության համար։

32-րդ Պարապմունք,—Առևտուր (արտաքին և ներքին). Կոոպերացիա։ Տուրքերը, նրանց նշանակությունը (զինվորական ծառայողների առանձնաշնորհումները)։

ՈԺԱՆԴԱԿԻՉ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Քաղգրագիտության ծրագիրը համաձայն ПУР-ի № 497 հրամանի 7-րդ գլ. §§ 65—75

Месяцев—Земельная и сельско-хозяйственная политика в России.

Ленин—О продналоге

Крыжановский—Электрофикация России, Кодексы законов о труде. Кодексы законов о земле

33-րդ պարապմունք—Հրահանգչական պարապմունք. ինչպես անցկացնել հարց ու պատասխանի յերեկոներ։

Գործնական պարապմունք.—հարց ու պատասխանի յերեկո, զրույց կարմիր բանակայինների հետ Քաղուստավի 7-րդ գլխից։

VII ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿՈՒՄ ՏԱՐՎՈՂ ՔԱՂԱՔԱՏԱՆՔՆԵՐԻ ՁԵՎԵՐԻ ՅԵՎ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՅԵԶՐԱՓԱԿԻՉ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

35—36 պարապմունքներ։—Քաղուստաշխատանքների ձևերի և մեթոդների իմացումը վորպես անհրաժեշտ պայման այդ աշխատանք-

ների կիրառման։ Քաղաքամի նշանակությունը։ Զրույցի մեթոդը (նոր առաջ յեկող հարցեր)։ Ինդուկտիվ մեթոդի կիրառումը։ Ագիտացիայի կապը մոմենտի գործնական հարցերի և կարմիր բանակայինների առորյա կյանքին վերաբերող և նրանց հետաքրքրող խնդիրների հետ։ Խնդիրների մոտեցումը առորյային և հնարավորապես մերձեցում կարմիր բանակայիններին։ Թեմաներ զորանոցի կյանքից կարմիր բանակայինների զրույցների համար։ Թեմաներ հայրենի գյուղի կյանքից։ Լրագրների բարձրաձայն ընթերցանություն։ Ագիտացիոն պատմվածքներ և վոտանավորների ընթերցումը։ Ինչպես ոգտագործել ագիտացիոն պլակատներ։ Քաղաքական ուսուցում, վորպես հիմունք կարմիր բանակայինների քաղաքական զատիրակության համար։ Քաղուսուցման յուրացումը։ Ինչպես ոգտագործել զրադարանը և ինչպես սովորեցնել կարմիր բանակայիններին նրանից ոգտվելու համար։ Հարցուպատասխանի յերեկոներ։ Քաղաքական զատեր։ Քաղաքական խմբակներ. բանավոր (устная) լրագիր։ Վաշտի ընդհանուր ժողով։ Վաշտերի միջին ընդհանուր ժողովներին դուրս [illegible] Զինվորական վարժությունները [illegible] աշխատանքների հետ։

2013
<< Ազգային գրադարան
NL0037691
3(07)
Ծ-89